Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 479 - Ա
որոշման

«ԱՐՏԱՔԻՆ ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի ջրամատակարարումը ապահովելու նպատակով իրականացվելու է արտաքին ջրատար համակարգի վերակառուցման շինարարական և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման աշխատանքները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայր, ջրամատակարարում
6.	Ծրագրի բյուջեն	28,807,452 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի ջրամատակարարումը ապահովելու նպատակով նախատեսվում է

		արտաքին ջրատար համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ մասնավորապես աղբյուրակապերի, օրվա կարգավորիչ ջրամբարների վերակառուցում և ջրատարի կառուցում: Իրականացվելու է՝ 2026 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 28,522,230 դրամի չափով: 2) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրի ջրամատակարարման արտաքին ջրատար համակարգի վերակառուցման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում: Իրականացվելու է 2026 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2027 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 285,222 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) բնակավայրի ջրամատակարարման արտաքին ջրատար համակարգի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 28,522,230 դրամի չափով: 2) շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 285,222 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետություն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ